

Luys Lnyu®




ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային,
2018-2019թթ., %**




2019թ. հուլիսի տվյալներով տնտեսությունում զգալի դրական տեղաշարժեր չեն արձանագրվել: Տնտեսական ակտիվության ցուցանիշը հունվար-հուլիս ամիսներին կազմել է 6.8%, ինչը նախորդ ամսվա ցուցանիշից բարձր է ընդամենը 0.3 տոկոսային կետով, սակայն շարունակում է զգալիորեն (2.3 տոկոսային կետով) ցածր լինել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Ամսական աճը, այսինքն՝ հուլիս ամսվա աճը, նախորդ տարվա հուլիսի նկատմամբ, կազմել է 8.1%, որը սակայն 3.0 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Տնտեսական ակտիվության աճը ապահովող ճյուղերը ևս չեն փոխվել: Ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը՝ 6.9 տոկոսային կետով: Փոքր-ինչ ավելացել է արդյունաբերության ճյուղի նպաստումը՝ կազմելով 1.7 տոկոսային կետ, որն էլ ապահովել է ՏԱՑ-ի 0.3

տոկոսային կետ աճը: Աճին նպաստել են նաև առևտրի (1.1 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:


Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-հուլիս, %



1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Փոքր-ինչ դրական միտումներ են նկատվում արդյունաբերության ոլորտում: 2019 թվականի հունվար-հուլիս ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 8.4 տոկոսով: Սա բավական բարձր ցուցանիշ է, եթե հաշվի առնենք, որ վերջին հինգ


* Գյուղատնտեսության ցուցանիշը հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

տարիներին (2013-2018թթ.) արդյունաբերության միջին աճի տեմպը կազմել է 6.1%, սակայն այն դեռևս հեռու է 2017թ.-ի 11.8% աճից (որի 6.8 տոկոսային կետը պայմանավորված էր մշակող արդյունաբերության աճով):

Արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 5.6 տոկոսային կետ), որի կառուցվածքում աճում են գրեթե բոլոր ենթաճյուղերը: Մասնավորապես, նշանակալի են սննդամթերքի արտադրությունը (աճը՝ 7.8%, նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ), ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը (աճը՝ 16.7%, նպաստումը՝ 2.5 տոկոսային կետ), խմիչքների արտադրությունը (աճը՝ 7.9%, նպաստումը՝ 1.0 տոկոսային կետ) և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը (աճը՝ 37%, նպաստումը՝ 1.8 տոկոսային կետ):

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Շինարարության ծավալի աճի տեմպը շարունակում է դանդաղել: Հունվար-հուլիսի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 4.5 տոկոս, ինչը 5.9 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը և 0.2 տոկոսային կետով ավելի ցածր, քան հունվար-հունիսի ցուցանիշը:

² Արդյունաբերության կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-հունիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հուլիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Հիմնականում նվազել են կրթության, հանքարդյունաբերության, տրանսպորտի, տեղեկատվության և կապի, ինչպես նաև ջրամատակարարման ոլորտներում իրականացվող շինարարության ծավալները³:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Ծառայությունների աճի տեմպը նույնպես դանդաղել է: 2019թ. յոթ ամիսների ընթացքում 2018թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ այս ճյուղն աճել է 15.2 տոկոսով, որը 3.5 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (18.7%):

Ծառայությունների աճի կառուցվածքը զգալի փոփոխությունների չի ենթարկվել: Ծառայությունների աճին ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար-հունիս ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 6.3 տոկոսային կետով: Աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների մյուս բոլոր ենթաճյուղերի աճերը, որոնցից նշանակալի են եղել ֆինանսական և ապահովագրական գործունեության (3.5 տոկոսային կետով), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում (2.4 տոկոսային կետով) ենթաճյուղերի նպաստումները: Միևնույն ժամանակ, դանդաղել է տեղեկատվության և կապի ոլորտում մատուցված ծառայությունների աճի տեմպը՝ հունվար-մայիսի 6.9%-ից հունվար-հունիսին դառնալով 4.8%, ինչի հաշվին այս

³ Շինարարության կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-հունիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հուլիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:


Ենթաճյուղի նպաստումը ծառայությունների աճին նվազել է 0.4 տոկոսային կետով՝ դառնալով 0.7 տոկոսային կետ⁴:

Աղյուսակ 1. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-հունիս⁵

	2018թ. հունվար-հունիս, մլրդ. դրամ	2019թ. հունվար-հունիս, մլրդ. դրամ	Կշիռը, 2018թ. %	Կշիռը, 2019թ. %	Աճ, 2019թ. %	Նպաստում, տոկոսային կետ
Ծառայություններ, այդ թվում՝	777,770.7	905,412.1	100.0	100.0	115.3	15.3
Կաջության և հանրային սննդի կազմակերպում	54,411.5	73,621.8	7.0	8.1	133.8	2.4
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	163,319.0	217,503.4	21.0	24.0	130.1	6.3
Կրթություն	25,929.9	28,340.5	3.3	3.1	107.9	0.3
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	33,030.2	40,354.6	4.2	4.5	117.4	0.7
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	27,615.8	29,272.2	3.6	3.2	104.7	0.2
Տեղեկատվություն և կապ	117,567.4	124,483.2	15.1	13.7	104.8	0.7
Տրանսպորտ	99,834.4	104,707.2	12.8	11.6	103.7	0.5
Վարչարարական և օժանդակ գործունեություն	34,781.6	37,738.7	4.5	4.2	111.0	0.5
Մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	35,169.9	36,841.3	4.5	4.1	104.2	0.2
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	171,387.8	197,434.2	22.0	21.8	115.9	3.5
Սպասարկման այլ ծառայություններ	14,723.2	15,115.0	1.9	1.7	101.9	0.0

ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




⁴ Ծառայությունների կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-հունիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հունիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

⁵ 2019թ. հունվար-հունիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Հունվար-հուլիս ամիսներին առևտրի ոլորտի կուտակային աճի տեմպը կազմել է 8.9 տոկոս, որը 0.7 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %⁶



Հունվար-հուլիսին արտահանումն աճել է 3.0 տոկոսով: Հատկանշական է, որ նորից արտաքին առևտրի ցուցանիշները վերանայվել են, որի արդյունքում հունվար-հունիս ամիսների ցուցանիշը դարձել է դրական՝ -0.5% ից դառնալով 0.2%:


Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.3, 1.2 և 1.0 տոկոսային կետ: Մինչդեռ, «հանքահումքային արտադրանք», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները նվազել են՝ բացասաբար նպաստելով արտահանման աճին (համապատասխանաբար՝ -2.8, -2.2 և -1.4)⁷:

* Ներկայացված են 2019 թվականի հունվար-հուլիս ամիսների արտահանման և ներմուծման վերանայված տվյալները:

⁷ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-հունիս ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-հուլիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, 2018–2019թթ., %



Հունվար-հուլիս ամիսներին ներմուծումն աճել է 1.9%-ով, որը շարունակում է բավական ցածր մնալ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ներմուծման ցածր աճի տեմպը վկայում է տնտեսությունում ցածր պահանջարկի մասին:


Ներմուծման ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման 27.9 տոկոս աճով և հանքահումքային արտադրանքի 11.5 տոկոս աճով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 2.1 և 1.6 տոկոսային կետով: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են: Առավել նշանակալի է «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալների 12.2 տոկոսով կրճատումը, որը ներմուծման ընդհանուր աճին նպաստել է -2.3 տոկոսային կետով: Հատկանշական է, որ այս ապրանքախմբում հիմնականում ներառված են ներդրումային բնույթի ապրանքներ, որոնց ներմուծման կրճատումը վկայում է ներդրումների ցածր մակարդակի մասին:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2019թ. հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.9 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.3 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 4.1 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 3.8, 1.5 և 4.1 տոկոս: Միջին ամսական անվանական աշխատավարձը

կազմել է 178,325 դրամ, ընդ որում պետական հատվածում՝ 154,015 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 190,954 դրամ:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., հունվար-հուլիս, %⁸




ՓՈԽԱՐԺԵՔ

2019 թվականի հունվար-հուլիսին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.2 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.6 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 8.3 տոկոսով:

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)




⁸ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:



Ընթացիկ տարվա անվանական փոխարժեքի վարքագիծն առավել ակնհայտ է բացարձակ արժեքով դիտարկելիս: Գծապատկեր 11-ում կարող ենք նկատել, որ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամը սկսած մարտ ամսից՝ արժևորվում է, որը սակայն պայմանավորված չէ արտահանման և ներմուծման դինամիկայով: Դրամի արժևորման պատճառը կարող է լինել հարկաբյուջետային քաղաքականությունը, քանի որ տնտեսությունից հավաքված և չծախսված գումարները ստեղծում են դրամի պակաս տնտեսությունում: ՀՀ տնտեսության համար վտանգավոր է ինչպես դրամի արժեզրկումը, այնպես էլ արժևորումը: Եթե առաջինը բացասաբար է ազդում արտաքին պարտքի վրա և առաջացնում է գնաճ, ապա երկրորդը՝ արժևորումը, հանգեցնում է արտաքին մրցունակության նվազմանը և, հետևաբար, արտահանման կրճատմանը:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին ամսական անվանական փոխարժեքը, դրամ




ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Բյուջեի եկամուտներ

2019 թվականի հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 23.8 տոկոսով, ընդ որում՝ հարկերը և տուրքերն աճել են 23.2 տոկոսով: Ըստ նախնական տվյալների՝ հարկային եկամուտների 2019թ. հուլիսի պլանը թերակատարվել է մոտ 20.8 մլրդ դրամով, ինչը համահունչ է ՊԵԿ նախագահի այն հայտարարություններին, որ առաջին կիսամյակի գերակատարումները չեն շարունակվելու երկրորդ կիսամյակում:

Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-հուլիս ամիսներին կազմել են 777.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 6.1%-ով, որը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 3.2 տոկոսով (նպաստումը՝ -0.2 տոկոսային կետ):

Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2019թ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեն եղել է հավելուրդային և կազմել է 107.3 մլրդ դրամ: Հավելուրդի գոյացումը պայմանավորված է ինչպես ծախսերի թերակատարմամբ, այնպես էլ հարկային եկամուտների գերակատարմամբ:

Պետական պարտք

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




2019թ. հուլիսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,471.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 4.7 տոկոսով: Նախորդ ամսվա (հունիսի վերջի) նկատմամբ կառավարության պարտքը աճել է 62.8 մլն ԱՄՆ դոլարով (1.0%-ով): Ընդ որում, ներքին պարտքն աճել է 93.1 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքը կրճատվել է 30.3 մլն դոլարով, ինչի հաշվին արտաքին պարտքի կշիռը նվազել է 1.2 տոկոսային կետով՝ կազմելով 75.7%:

2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ կառավարության ընդհանուր պարտքն աճել է 98.7 մլն դոլարով (1.5%-ով), ներքին պարտքն աճել է 180.9 մլն դոլարով (13%-ով), իսկ արտաքին պարտքը նվազել է 82.2 մլն ԱՄՆ դոլարով (1.7%-ով): Արդյունքում կառավարությանը հաջողվել է բարելավել պարտքի կառուցվածքը: 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ արտաքին պարտքի կշիռը նվազել է մոտ 2.5 տոկոսային կետով:

Գնաճը


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը կրկին դանդաղել է: Վերջին մի քանի ամիսներին գնաճային միջավայրը փոքր-ինչ բարելավվել էր՝ մայիսին և հունիսին գտնվելով Կենտրոնական բանկի ստորին թիրախին մոտ, սակայն հուլիսին նորից դանդաղել է՝ կազմելով 1.7%:


Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %




2019թ. հուլիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. հուլիսի նկատմամբ կազմել է 17.0 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպը մոտ 10.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 10.6 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 5.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, %, 2019թ. հունվար-հուլիս



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 13.3 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.1 տոկոսային կետով (աճը՝ 30.4%), ինչպես նաև հիպոթեքային (աճը՝ 37.1%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 18.8%)՝ համապատասխանաբար 2.6 և 2.9 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը նվազել է 12.3%-ով՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով -2.1 տոկոսային կետով:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2019թ. հուլիսի տվյալներով տնտեսությունում զգալի դրական տեղաշարժեր չեն արձանագրվել: Բացառություն է միայն արդյունաբերության աճի արագացումը, որը տեղի է ունեցել մշակող արդյունաբերության աճի շնորհիվ: Սակայն, պետք է նաև նշել, որ մշակող արդյունաբերության աճը հիմնականում ապահովվել է ՀՀ մշակող արդյունաբերության մշտապես հիմնական համարվող ճյուղերի՝ սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների և խմիչքների արտադրությունների աճի հաշվին:

2. Տնտեսության զարգացման «վտանգավոր» միտումները դեռևս պահպանվում են: Մասնավորապես.

2.1. Ծառայությունների աճը փոքր ինչ դանդաղել է, դրա կազմում գտնվող «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղը (որը հիմնականում բաղկացած է խաղային ծառայություններից) աճել է մոտ 30.1 տոկոսով: Քանի որ այս ոլորտը չի ստեղծում հավելյալ

արժեք և չի կարող ունենալ նման տեմպերով անընդհատ աճ, ուստի այն չի կարող նպաստել հարկերի աճին: Խաղային ծառայությունների արագ աճը պայմանավորված է ոլորտում գերշահույթների կուտակմամբ, հետևաբար առնվազն պետք է մեխանիզմներ մտածել այս ոլորտը հարկման դաշտ բերելու համար:

2.2. Սպառողական վարկերի բավական բարձր աճը՝ տնային տնտեսությունների եկամուտների ցածր աճի պարագայում վտանգավոր է, քանի որ ապագայում կարող է առաջացնել ֆինանսական անկայունություն: Սպառողական վարկերն աճել են մոտ 30.1%, մինչդեռ միջին ամսական աշխատավարձն աճել են ընդամենը 5.9%-ով:

2.3. Հարկաբյուջետային քաղաքականության խնայողական վարքագիծը դեռևս պահպանվում է: Պետական բյուջեի հավելուրդը կազմել է 107.3 մլրդ դրամ, որը թեև նվազել է նախորդ ամսվա նկատմամբ, սակայն բավական հեռու է ծրագրային ցուցանիշից: Նշենք, որ 2019թ. ինն ամիսների համար (հունվարից սեպտեմբեր) բյուջեի պլանավորված պակասուրդը կազմում է 121.9 մլրդ դրամ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ հարկաբյուջետային քաղաքականության խնայողական վարքագիծը մոտ ժամանակահատվածում փոփոխության չի ենթարկվի:

3. Սկսած մարտ ամսից՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամն արժևորվում է, որը սակայն պայմանավորված չէ արտահանման և ներմուծման դինամիկայով: Դրամի արժևորման պատճառը կարող է լինել վերջին ժամանակահատվածում ՀՀ-ում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը, քանի որ տնտեսությունից հավաքված և չծախսված գումարները ստեղծում են դրամի պակաս տնտեսությունում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: